

ԷԼԵԿՏՐԱՍՏԱՏԻԿ ԴԱՇՏԵՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՆԵՏՆԵՐԻ ՍՊԵՐՄԱՏՈՓԵՆԵԶԻ ՀՈՐՄՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՍԵՐՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱ-ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՎԻՃԱԿԻ ՎՐԱ

Սահակյան Գ.Վ., Արծրունի Գ.Գ.

Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի ԳՀԿ-ի կենսաքիմիական և կենսաֆիզիկական մեթոդների լաբորատորիա, Հայաստան, Երևան

Ուսումնասիրվել են բնական ֆոնը գերազանցող էլեկտրաստատիկ դաշտերի (ԷՍԴ) (200 կՎ/մ) կարճաժամկետ (մեկ ժամ) և երկարաժամկետ (կտորակային, 6 օր, օրական 6 ժամ) ազդեցությունները ամենտների սպերմատոգենեզի գործընթացների վրա: Դաշտի ազդեցությունից անմիջապես հետո և հետագազդեցության 4-րդ, 7-րդ և 14-րդ օրերին կատարվել են սերմնարանների հյուսվածաբանական և ուլտրակառուցվածքային հետազոտություններ և տեստոսթերոնի, լյուտեիկիզացնող և ֆոլիկուլիթանիչ հորմոնների, պրոլակտինի ու կորտիզոլի քանակական որոշում: Համաձայն ստացված արդյունքների, հետազոտվող պարամետրներով ԷՍԴ-ի թե՛ մեկժամյա, և թե՛ երկարատև ազդեցությունները բերում են սպերմատոգենեզի հորմոնալ կարգավորման և սերմնարանների կառուցվածքային վիճակի փոփոխությունների: Դաշտի մեկժամյա ազդեցության արդյունքում սպերմատոգենեզը ակտիվանում է, իսկ երկարատև ազդեցության արդյունքում՝ ճնշվում: Դաշտի ազդեցությունից հետո ընթացող վերականգնման գործընթացների բնույթը կախված է էքսպոզիցիայի տևողությունից: Դաշտի մեկժամյա ազդեցությունից հետո այն ունի աստիճանական, իսկ երկարատևից հետո՝ ալիքաձև բնույթ: